

ազատի քանի որ ինք եւ ձին դեռ կտրէին տոկալ, վասնզի իւր եւ կենդանուոյն պաշար չէր մնացեր: Արեւն սկսաւ խոնարհիչ, եւ երկիրն սկսաւ փոխուիլ. բարձունք երեւեցան եւ ինք վերջապէս աւագը թողուց եւ ամուր հողի վրայ սկսաւ երթալ, վտանգը թեթեւցած էր, վասնզի կ'երեւակայէր, որ արաքն այդ երկրները կոխելով՝ քրիստոնեան բարձունքը քաշուած էր. տեղ-տեղ հիւղեր կը նշմարուէին, եւ տեսաւ երկու-երեք հետեւակ մարդիկ, որ դէպի կիրճ մը կ'ուղղուէին, շտապեց ձին եւ հարցուց, թէ մօտ բնակութիւն կա՞ր. նոցայ կասկածոտ նա յուածքր, զգեստներուն աւելի մաքրութիւնը, զէնքերուն ձեւը յայտնի ըրին թէ քրիստոնեայ ասորիք էին, ուստի առանց սպասելու նոցայ պատասխանին՝ «Ես քրիստոնեայ եմ,- ըսաւ,- ինձմէ մի՛ կասկածիք, եթէ դուք քրիստոնեայ էք զրուցեցէք համարձակ»: Մարդկանց վստահ ձեւը եւ ուրախութիւնը նաեւ յայտնեց թէ քրիստոնեայ էին, ինչպէս խոստովանեցան, բայց իմացուցին թէ այն օրերը շատ վտանգաւոր յարձակումներ կրած էին յարաբաց, եւ թէ մօտերը նոցայ աւագակաց խումբեր կը թաւառէին եւ թէ իրենք Մարտայիթ ըսուած քրիստոնեայք էին, որ Լիբանանու եւ Ամանոսի մէջ ամրացուած կը կռուէին՝ այն կողմերը միակ պատուար մնացած քրիստոնեութեան:

Սուրեն ապահովեալ էր յարաբաց, գնաց հիւր եղաւ այն գիշեր նոցայ լեռնային խրճիթներուն մէջ, իմացաւ թէ Կ'իլիշայի մօտերն էր, ուստի հանգստացաւ, եւ առաւօտուն ելաւ ուղղուեցաւ հանտիոք Կ'ոմակենի, վասնզի կուգէր ժամ առաջ հասնիլ քաղաք մը, որ կարէնար իւր ազգայիներէն մարդ գտնել, եւ կը յուսար, բայց երբ հասաւ քաղաքը գրեթէ անապատ էր, ինչպէս բոլոր ասորուոց քաղաքները, ամէն ոք ինչքն առած՝ լեռներն ելեր եւ հիւղաբնակ էր եղեր. հազիւ քանի մը կրպակ կային, ուր կենաց ամենակարեւոր պիտոյք կը գտնուէին, ուստի ինք նաեւ Գերմանիկ երթալու համար Ամանոսի ճամփան բռնեց, բայց հազիւ ժամուան չափ հեռացեր էր լքեալ քաղքեն՝ բլուրի մը վրայ բարձրանալով տեսաւ որ երկու խումբ կատաղաբար կը կռուէին իրարու հետ: Իւր վարժ եւ սուր աչքը որոշեց մահմեդական արաբացին եւ քրիստոնեայ ասորին, առանց վայրկեան մը տատամսելու յարձակեցաւ՝ մտաւ այդ խառնուրդին մէջ, իւր զգեստներուն պերճութիւնը կամ արաբ նժոյգը չէր, որ քրիստոնեայ եւ մահմեդական զարմանոք եւ սոսկմամբ շփոթեց, այլ իւր ահագին սուրին փայլը եւ արագութիւնը, որ արեան գետեր կը հոսեցնէր, երկու կողմը գերմարդկային եակ մը զինք կարծեցին, եւ երբ մահմեդական գնդին պարագլուխը նաեւ կայծակնահար ինկաւ գլորեցաւ իւր Սուրեն երկու ճգթուած, հեթանոսաց զօրքը ցանուցիր սկսան փախչիլ, յաղթութիւնը քրիստոնեից եղաւ, ամենքն օւսանաններով Սուրենի ձիուն առջեւ կը տարածէին իրենց վերարկուները եւ